"НАЦИОНАЛЬНЫЙ АКАЛЕМИЧЕСКИЙ ТЕАТР
ОПЕРЫ И БАЛЕТА им. А.СПЕНДИАРЯНА"
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ
ОРГАНИЗАЦИЯ

ALEXANDER SPENDIARIAN OPERA AND BALLET
NATIONAL ACADEMIC THEATRE,
NON-COMMERCIAL STATE ORGANIZATION

«Ա.ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

N 1549-Լ

«17» սեպտեմբերի 2025 թ.
ք. Երևան

«ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ» ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և ի կատարումն ՀՀ մշակույթի նախարարի 2020 թվականի մայիսի 22-ի թիվ 652-Ա հրամանով հաստատված «Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության, այսուհետ՝ Թատրոն, կանոնադրության 25-րդ կետի 12-րդ ենթակետի պահանջներով Հայաստանի Հանրապետության «Անկախության տոնի» կապակցությանբ՝

հրամայում եմ.

1. 2025 թվականի սեպտեմբերի 21-ին, ժամը 21:00-ին Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ Երևանի Ազատության հրապարակում կազմակերպել բացօթյա համերգ, այսուհետ՝ Համերգ:

2. Համերգին մասնակցում են Թատրոնի նվագախումբը, երգչախումբը, բալետային խումբը, մեներգիչները՝ ՀՀ վաստակավոր արտիստ Կարեն Դուրգարյանի ղեկավարությամբ:

3. Համերգի ժամանակ կատարվելու են հայ և արևմտաեվրոպական հեղինակների ստեղծագործությունները:

4. Բեմադրական մասի վարիչի պ/կ Տ. Մանվելյանին՝ համերգի պատշաճ կազմակերպման նպատակով համերգի համար նախատեսված տարածքը ապահովել համապատասխան սարքավորումներով և գույքով:

5. Թատրոնի գլխավոր ճարտարագետ Պ. Ենոքյանին՝ մինչև համերգի օրը Համերգի մասնակիցների համար անցկացնել անվտանգության հարցերով հրահանգավորում, ապահովել Համերգի մասնակիցների համար անվտանգ պայմաններ:

6. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Համերգի կազմակերպական, տեխնիկական աշխատանքներին և Համերգին մասնակցող «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային

կազմակերպության, այսուհետ՝ Թատրոն, աշխատակիցներին սահմանված կարգով մեկ լրացուցիչ օր ավելացնել ամենամյա արձակուրդին:

7. Սույն հրամանի կատարման նկատմամբ պատասխանատվությունը դնել համերգի կազմակերպական, տեխնիկական աշխատանքներն իրականացնող և համերգին մասնակցող ստորաբաժանումների ղեկավարների վրա:

8. Անձնակազմի կառավարման բաժնին՝ սույն հրամանի մասին պատշաճ ծանուցել Համերգին մասնակցող Թատրոնի աշխատակիցներին:

9. Թատրոնի առցանց տոմսերի վաճառքի օպերատորին՝ սույն հրամանը հրապարակել Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում առանձին բաժնում՝ նշելով ակտի հրապարակման օրը:

10. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակմանը հաջորդող օրը:

Թատրոնի տնօրեն՝ **Կ. Դուրգարյան**

ք. Երևան
«17» սեպտեմբերի 2025 թ.